

10. Հանրապետությունում վնասվածության III և IV աստիճանի (վթարային և խարխուլ) բազմաբնակարան շենքերի և բնակելի տներ (առանձնատներ) (ըստ միանվագ հաշվառման արդյունքների)

Հանրապետության վնասվածության III և IV աստիճաններ ունեցող բազմաբնակարան շենքերի, բնակարանների և բնակելի տների (առանձնատների) հաշվառումը և դրանց տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը հաստատում է «Հայկական սեյսմակայուն շինարարության և կառուցվածքների պահպանման գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ն (Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ): Ըստ Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ տվյալների, հանրապետությունում առկա բազմաբնակարան շենքերի քանակն ըստ մարզերի և վնասվածության աստիճանների, 2002թ. օգոստոս ամսվա դրությամբ հետևյալն է.

	Վնասվածության III աստիճան		Վնասվածության IV աստիճան	
	ընդամենը	որից՝ մասնակի	ընդամենը	որից՝ մասնակի
Երևան	281	16	34	16
Արագածոտն	29	2	4	1
Արարատ	-	-	-	-
Արմավիր	7	-	-	-
Գեղարքունիք	2	-	-	-
Լոռի	121	9	10	9
Կոտայք	5	4	4	4
Շիրակ	144	19	19	19
Սյունիք	3	-	-	-
Վայոց ձոր	2	1	1	1
Տավուշ	37	-	2	-
Ընդամենը	631	51	74	50

Վնասվածության III և IV աստիճաններ ունեցող բազմաբնակարան շենքերի, բնակարանների և բնակելի տների (առանձնատների) հաշվառման նպատակով, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը 2001թ. դեկտեմբեր ամսին անցկացրել է այդ որակավորման բնակարանային ֆոնդի միանվագ հաշվառում: Տեղեկատվությունը ստացվել է 930 քաղաքային և գյուղական համայնքներից (47 քաղաքային, 12 թաղային համայնքային և 871 գյուղական): Տեղեկատվությունը տրամադրել են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները: Իրավիճակային հաշվառման ժամկետ է ընդունվել 2001թ. դեկտեմբերի 1-ը:

Միանվագ հաշվառման ամփոփված արդյունքները ՀՀ քաղաքաշինության նախարարության տեղեկատվական բանկում առկա տվյալների հետ համեմատելիս պարզվել է, որ որոշ բազմաբնակարան շենքերի մասով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, դեռևս, համապատասխան փաստաթղթերը չեն ներկայացրել Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ համաձայնեցման և դրանք չեն ընդգրկվել ինստիտուտի տվյալների բանկում: Արդյունքում ստացվել է, որ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների տրամադրած տեղեկատվությունը զգալիորեն գերազանցում է Հայսեյսմշին և ԿՊ ԳՀԻ տվյալներին:

Ստորև ներկայացվում է ՀՀ ԱԿԾ կողմից անցկացված միանվագ հաշվառման արդյունքների քանակական ուսումնասիրությունը: